ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԻՊՈՒՏԱՏՆԵՐԻ ԼՂԻՄ XX ԳՈՒՄԱՐՄԱՆ ՍՈՎԵՏԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԼՂԻՄ-Ը ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԿԱԶՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ի ԿԱԶՄ ՅԱՆՁՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍՍՀ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՅՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԱՌՋԵՒ ՄԻՋՆՈՐԴԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լսելով ու քննարկելով ժողովրդական դեպուտատների ԼՂԻՄ սովետի դեպուտատների ելոյթները ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ յանձնելու համար Ադրբեջանական ՍՍՀ եւ Հայկական ՍՍՀ Գերագոյն սովետների առջեւ միջնորդելու մասին», Ժողովրդական Դեպուտատների Լեռնային Ղարաբաղի XX գումարման մարզային սովետի արտահերթ նստաշրջանը ՈՐՈՇՈՒՄ է.

Ընդառաջելով ԼՂԻՄ-ի աշխատաւորների ցանկութիւններին, խնդրել Ադրբեջանական ՍՍՀ Գերագոյն սովետին ու Հայկական ՍՍՀ Գերագոյն սովետին՝ խորն ըմբռնման զգացում դրսեւորելով Լեռային Ղարաբաղի հայ բնակչութեան իղձերին եւ լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ յանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՀ Գերագոյն սովետի առջեւ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ-ի կազմից Հայկական ՍՍՀ-ի կազմ յանձնելու հարցի դրական լուծմանը: